ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

«03» Հուլիսի 2024 թ.

Հերմինե Ծիրանյան Ա/Ձ
տնօրեն՝ Հերմինե Ծիրանյանին
(Հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ,
ք. Վարդենիս, Անդրեասյան փողոց 1/4,
Էլ.փոստ marat.stepanyan.01@mail.ru)

ՈՐՈՇՈՒՄ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարդենիսի համայնքապետարանի կարիքների համար ծաղիկների ձեռքբերման նպատակով թիվ «**ՀՀԳՄՎՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/21**» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի /այսուհետ՝ գնման ընթացակարգ/ շրջանակներում աճուրդն ամփոփվել է 2024 թվականի մայիսի 31-ին և համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել **Հերմինե Ծիրանյան Ա/Ձ-ն**:

Համաձայն գնման ընթացակարգի հրավերի 8.11 և ՀՀ կառավարության 05.05.2017թ. 526-Ն որոշման 41-րդ կետերի՝ մասնակցին համակարգի միջոցով ծանուցվել է անհամապատասխանությունների մասին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը, ինչը չի կատարվել մասնակցի կողմից սահմանված ժամկետում, այդ իսկ պատճառով ապրանքների ամբողջական նկարագիրը չշտկելու համար **Հերմինե Ծիրանյան Ա/Ձ**-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 05.05.2017թ. 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը՝

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա. ենթակետի պահանջները՝

ՈՐՈՇԵՑԻ

1. **Հերմինե Ծիրանյան Ա/Ձ**-ին (ՀՎՀՀ՝ 74434119, հասցե՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Անդրեասյան փողոց 1/4) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:
2. Սույն որոշման օրինակն ուղարկել Մասնակցին և ՀՀ ֆինանսների նախարարություն:
3. Որոշումը կարող է բողոքարկվել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ այն ստանալու օրվանից երեսուն օրվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Կատ. ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Արտյոմ Մկրտչյան